562 Սիրեցիր ինձ, Տէր, փրկեցիր հոգիս,

1. Սիրեցիր ինձ, Տէր, փրկեցիր հոգիս,
Մինչ թափառում էի մեջն անապատի,
Մոլորված ոչխար՝ երկյուղը սրտիս,
Մատնված մահվան, մռայլ վիճակի:

Սիրեցիր ինձ, Տէր, ես քեզ չսիրած՝
Խոցված ձեռքերով բուժեցիր վերքերս:
Հովանուդ ներքո ես պատսպարված՝
Կվայելեմ Քո հոգին սիրակեզ:

2. Սիրեցիր ինձ, Տէր, լույս տվիր հոգուս
Տանը անճրագ, ուր խավար էր խոր:
Հեծեծում էի մեղքի ճնշման տակ,
Դու՝ կյանք տվող լույս, եկար կյանքիս մեջ:

3. Անտեղյակ էի սիրուդ փրկարար
Եվ հեռու խաչից, որի վրա գամված
Դատապարտվածիս փրկության համար
Դու հոժարակամ պատարագվեցիր: